



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբ. 22 - ի թիվ 5/7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա
պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային,
դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Կրթական ծրագրերի
կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված
ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԴ խորհրդի
2013թ. մարտի 22 -ի թիվ 5/7 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012թ. գործունեության տարեկան ծրագրի 6.5 կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. հունվարի 17-ի թիվ 1/2 որոշում:

Վերահսկողության նպատակը՝ “Կրթական ծրագրերի կենտրոն” ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից, օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ “Կրթական ծրագրերի կենտրոն” ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից, օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային

միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրեր:

Վերահսկողության օբյեկտը՝ “Կրթական ծրագրերի կենտրոն” ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2012 թվականի հունվարի 23-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերահսկողության ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2010 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակը: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքները՝

1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

2010թ. մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը բաղադրիչի դրամարկղային ծախսը կազմել է 869,762.5 հազ. դրամ:

Բաղադրիչի նպատակն է մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը՝ առավել աղքատ և խոցելի համայնքների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին, ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ՝ մատուցելով 3,5-4 ժամյա տևողությամբ (առանց տաք սննդի և քնելու կազմակերպման) նախադպրոցական կրթական ծառայություն:

Վարկի ֆինանսավորման համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) համաձայն, բաղադրիչով նախատեսված է մրցութային հիմունքներով ընտրել առավել խոցելի համայնքների 140 հաստատություններ (տարեկան 30-40 հաստատություն), որոնց կտրամադրվի դրամաշնորհ:

2010-2012թթ. տասը մարզերից ներկայացված 275 հայտերից հանձնաժողովի կողմից հաստատվել է 194 հայտ, որոնց առ 01.10.2012թ. հատկացվել է 806,342.7 հազ.դրամ դրամաշնորհ:

Համաձայն միկրոծրագրերի իրականացման ղեկավար ձեռնարկի, վարկային միջոցները պետք է ուղղվեին նախադպրոցական կրթության միկրոծրագրերի մեկնարկային գործողություններին՝ տարածքի բարեկարգման, հարդարման, գույքով և սարքավորումներով համալրման, ինչպես նաև ուսումնական և ուսուցողական նյութերի ձեռք բերման համար:

Կատարված ծախսերի նպատակայնությունը ուսումնասիրելու նպատակով ընտրանքային կարգով Արմավիրի և Արարատի մարզերի վեց հաստատություններ կատարված այցելությունից պարզվեց, որ նախադպրոցական խմբերը գործում են և հատկացված միջոցները հիմնականում օգտագործվել են նպատակային՝ տարածքները բարեկարգվել և կահավորվել են, ձեռք են բերվել ուսումնական և ուսուցողական նյութեր, գույք և սարքավորումներ:

Բաղադրիչով նախատեսված դաստիարակների վերապատրաստումն իրականացրել է «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը՝ (այսուհետ՝ հիմնադրամ) մեկ աղբյուրից գնման մեթոդով:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետկան հիմնարկի (այսուհետ՝ ԾԻԳ) և հիմնադրամի միջև 01.11.2010 թվականի թիվ 27/10 և 01.12.2011 թիվ 66/11 կնքված պայմանագրերի համաձայն, մեկ վերապատրաստվող դաստիարակի հաշվով, եռօրյա (3օր x 7 ժամ=21 ժամ) վերապատրաստման ծախսը կազմել է 80.1 հազ. դրամ՝ (վերապատրաստող դասախոսի 1 ժամի ծախսը կազմում է 14.9 հազ. Դրամ՝ ներառյալ բոլոր հարկերը և

տուրքերը) այն դեպքում, երբ վերապատրաստման փորձ ունեցող «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԿԱԻ-ի) կողմից մեկ վերապատրաստվող դաստիարակի 60 ժամյա վերապատրաստման միջին ծախսը կազմել է 23.0 հազ. դրամ, իսկ 30 ժամյա վերապատրաստմանը՝ 15.0 հազ. դրամ (վերապատրաստող դասախոսի 1 ժամի արժեքը սահմանվել է 2.0 հազ. դրամ ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը):

Ուսումնասիրությունից պարզվեց, որ հիմնադրամի կողմից չի պահպանվել «Ղեկավար ձեռնարկի» պահանջները՝ յուրաքանչյուր հաստատություններից 2-ական մանկավարժական կադրեր (այդ թվում տնօրեն) վերապատրաստելու փոխարեն վերապատրաստվել են 3-6-ը, որոշ դեպքերում էլ վերապատրաստվել են նաև երաժշտական ղեկավարներ և դաստիարակի օգնականներ, որոնք հետագայում չեն ներգրավվելու բաղադրիչի շրջանակներում նախադպրոցական ծրագրերի իրականացման աշխատանքներին:

Հիմնադրամի կողմից չի պահպանվել ղեկավար ձեռնարկի 4-րդ բաժնի 5-րդ պարբերության պահանջը՝ 2010-2011թթ. նախատեսվածից 121 մարդ ավել է վերապատրաստվել, որի արդյունքում (ծախսերը հաշվետվությունների հիման վրա ընդունվել են ԾԻԳ-ի կողմից) վարկային միջոցներից կատարված ծախսը կազմել է 3,727.2 հազ. դրամ:

ԾԻԳ-ի և հիմնադրամի միջև 01.11.2010թ կնքված թիվ 27/10 պայմանագրի նախահաշվի համաձայն, մեկ վերապատրաստվողի սննդի և սուրճի ընդմիջման համար նախատեսվել է 4100 դրամ, իսկ 01.12.2011թ. թիվ 66/11 պայմանագրով՝ 5000 դրամ:

Վերը նշված ծախսերը (դրանց չափերը) որևէ իրավական ակտով սահմանված չեն, ինչպես նաև համադրելի չեն այլ բաղադրիչների շրջանակներում իրականացված վերապատրաստումների համապատասխան ծախսերի հետ: Դրանք հիմնադրամի կողմից սահմանվել են կամայական:

Հիմնադրամի կողմից ներկայացված ծախսերի նախահաշիվը առանց փոփոխության, ընդունվել է ԾԻԳ-ի կողմից և վճարումները կատարվել են ներկայացված հաշվետվություններին համապատասխան:

2. Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով

2010թ. մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը բաղադրիչի դրամարկղային ծախսը կազմել է 945,813.3 հազ. դրամ:

Խախտվել է ՀՀ կառավարության 23.12.2010թ.-ի N 1711-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 26-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը, այն է՝ նախարարությունը հաստատում է բաղադրիչների տարեկան ծախսերի նախահաշիվը և նրա փոփոխությունները՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Բաղադրիչի հիմնական նպատակն է բարձրացնել հանրակրթության որակը ուսուցիչների մասնագիտական գիտելիքների ու մանկավարժական հմտությունների շարունակական զարգացման միջոցով և արդիականացնել մանկավարժի մասնագիտական վարկանիշը՝ մանկավարժական ծառայությունների պայմանների բարելավման միջոցով:

2011թ.-ին ատեստավորման նպատակով ուսուցիչների վերապատրաստման ընթացքում մինչև 30 կմ հեռավորության բնակավայրերից ժամանած և մեկնած ուսուցիչներին բացի ճանապարհածախսից վճարվել է նաև սննդի գումար՝ օրական 2000 դրամ: Ուսուցիչների վերապատրաստման «Ղեկավար ձեռնարկ»-ով (այսուհետ՝ Ձեռնարկ) և ՀՀ կառավարության 29.12.2005թ.-ի N 2335-Ն որոշման պահանջներով սննդի գումար չի նախատեսվում: Սակայն 13 վերապատրաստող կազմակերպությունների նախահաշիվներով նախատեսվել է սննդի գումար, որը

ընդունվել է ԾԻԳ-ի կողմից և վճարվել: Ընդամենը ծախսը կազմել է 121,206.0 հազ. դրամ:

2011թ.-ին իրականացված վերապատրաստման միջին ծախսը մեկ ուսուցչի հաշվով կազմել է 103,9 հազ. դրամ, 2012թ.-ին՝ 48.2 հազ. դրամ: Այն արդյունք է նրա, որ 2012թ. վերապատրաստումների ընթացքում չեն կատարվել սննդի, համակարգչային սարքավորումների և տեխնիկայի, առանձին դեպքերում տրանսպորտային և նախահաշվով նախատեսված այլ ծախսերը:

Վերապատրաստումները կատարվել են միայն առկա ձևով: Նախատեսված հեռավար, առցանց ձևերով վերապատրաստումներ չեն իրականացվել, այն դեպքում, երբ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ԿՏԱԿ) առկա են տեխնիկական բոլոր հնարավորությունները վերապատրաստումները հեռավար ձևով իրականացնելու համար: Գործում է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը և բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով: Դրանց կիրառման պարագայում վարկային միջոցներով իրականացվող վերապատրաստման ծախսերը էականորեն կնվազեին:

Նախարարի 15.09.2011թ N 1041-Ա/Ք հրամանով հաստատված Ձեռնարկի 2.2 կետով նախատեսվել է, որ ուսուցիչներ վերապատրաստող կազմակերպությունները (այդ թվում ոչ պետական) (այսուհետ՝ ՈԻՎԿ) կարող են դրամաշնորհային միջոցների հաշվին (20 տոկոսի չափով) ձեռք բերել համակարգչային և լաբորատոր սարքավորումներ, ինչպես նաև վերապատրաստումների համար անհրաժեշտ այլ գույք, դրանց համալրման նպատակով: Սակայն ինչպես Ձեռնարկով, այնպես էլ ԾԻԳ-ի և ՈԻՎԿ-ների միջև կնքված դրամաշնորհի պայմանագրերով չի նախատեսվել դրամաշնորհային միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների հետագա տնօրինման պայմանները, այն դեպքում, երբ կազմակերպությունը կարող է հաջորդ տարի (կամ ընդհանրապես) չընդգրկվել վերապատրաստում իրականացնող

կազմակերպությունների ցանկում: ՈԻՎԿ-ների կողմից դրամաշնորհային միջոցների հաշվին ձեռք է բերվել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ:

Բաղադրիչով նախատեսվել է նաև կառավարման հմտությունների զարգացմանն ուղղված դպրոցի տնօրենների վերապատրաստում: Վերապատրաստման նյութերի մշակման և վերապատրաստողների ուսուցման նպատակով Այ-Ի Փարթներս ՄՊԸ-ի կողմից 2010-2011թթ.-ին մշակվել և նախարարության կողմից գործածության են երաշխավորվել «Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկը», «Վերապատրաստողների ուղղեցույցը» և պատրաստվել են վերապատրաստող 25 դասախոսներ, որոնց համար կատարված ծախսը կազմել է 69,947.9 հազ. դրամ, սակայն գործընթացը դադարեցվել է, և դպրոցի տնօրենների վերապատրաստումներ չեն իրականացվել:

3. Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում

2010թ. մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը բաղադրիչի դրամարկղային ծախսը կազմել է 1,499,219.6 հազ. դրամ:

Բաղադրիչով նախատեսվել է բաց կրթական պլատֆորմի ստեղծում: Այն իրենից ներկայացնում է կրթական միջավայր, որտեղ օգտվողներին հնարավորություն է ընձեռնվում տեղադրելու էլեկտրոնային նյութեր և կազմակերպելու դասընթացներ: Պլատֆորմի տեխնիկական չափորոշիչների մշակման համար պայմանագիր է կնքվել միջազգային փորձագետի հետ, որի առաջին այցը կայացել է 2010թ. օգոստոսին: Մասնագետը կատարված աշխատանքների վերաբերյալ կազմել է նախնական հաշվետվություն, և չի շարունակել իր գործունեությունը, քանի որ նշված պլատֆորմի ստեղծմանն ուղղությամբ իրականացվելիք աշխատանքները դադարեցվել են, այն դեպքում, երբ նախնական փուլում կատարվել է 6,878.7 հազ. դրամի ծախս: Աշխատանքների դադարեցման արդյունքում կրթական պլատֆորմը չի ստեղծվելու:

Բաղադրիչի շրջանակներում ղեկավար ձեռնարկով նախատեսվել է 1000 դպրոցներին համակարգչային սարքավորումների (մեկական՝ համակարգիչ, անխափան սնուցման սարք, բազմաֆունկցիոնալ տպիչ սարք) հատկացում: Մրցույթը հայտարարվել է ոչ թե 1000, այլ 1360 դպրոցների համար համակարգչային սարքավորումների ձեռք բերման համար: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված “Յունիքումփ” ՓԲԸ-ի հետ կնքվել է 583,461.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր (համակարգիչների և բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի մաքսազերծումն իրականացրել է ԾԻԳ-ը(131,625.0 հազ. դրամ)): Պայմանագրով 1360 համակարգչային փաթեթներից բացի նախատեսվել է 25,079.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով ևս 50 համակարգչային փաթեթ, որը հատկացվել է նախարարությանը, ինչը ղեկավար ձեռնարկով չի նախատեսվել:

Բաղադրիչով նախատեսվել է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում (այսուհետ՝ ՀԴԻՑ) ընդգրկել 459 հաստատություններ: Հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել “Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը” (այսուհետ՝ հիմնադրամ): 2011թ. մայիսի 13-ին կնքվել է 758,265.0 հազ. դրամի պայմանագիր:

Դպրոցներում սարքավորումների տեղադրված լինելու փաստն արձանագրվել է քառակողմ ակտերի միջոցով (ԾԻԳ, հիմնադրամ, ԿՏԱԿ, հաստատություն): Այսինքն, սարքավորումների տեղադրված լինելու վերաբերյալ ԾԻԳ-ը բացի հիմնադրամի կողմից ներկայացրած հաշվետվություններից, ուներ նաև սարքավորումների տեղադրված լինելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտեր: Սարքավորումները տեղադրելուց հետո, հիմնադրամի և ԾԻԳ-ի համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ, կենտրոնական հանգույցում իրականացվել է ցանցի թեստավորում, որի արդյունքում կազմվել է հավաստագիր այն մասին, որ ցանցը գործում է և բոլոր դպրոցների և կենտրոնական հանգույցի միջև կապն առկա է: Պետք է նշել, որ թեստի արդյունքները որևէ ձևով (էլեկտրոնային կամ փաստաթղթային) ԾԻԳ-ում և հիմնադրամում չեն պահպանվել: Հանձնաժողովի

կողմից իրականացվել են այցեր 9 դպրոցներ, որի արդյունքում պարզվել է, որ բոլոր 9 դպրոցներում սարքավորումները տեղադրվել են հուլիս ամսվա վերջին, կամ օգոստոս ամսվա սկզբին: Այսինքն, թեստի իրականացման պահին (16/06/2012թ.) տվյալ դպրոցները չէին կարող կենտրոնական հանգույցի հետ կապված լինել, քանի որ կապը ապահովող համապատասխան սարքավորումները թեստավորման օրվա դրությամբ դեռևս դպրոցներում տեղադրված չեն եղել: Հատկանշական է այն, որ վերոնշյալ թեստին մասնակցություն չի ունեցել ԿՏԱԿ-ը (ցանցի հետագա սեփականատերն ու շահագործողը), որը պետք է ընդուներ գործող ցանցը և ոչ թե միայն տեղադրված սարքերը:

2012թ. հունիսի 18-ից իրականացվել է նոր ցանցի եռամսյա երաշխիքային սպասարկում: Համաձայն ԾԻԳ-ի և հիմնադրամի միջև կնքված պայմանագրի՝ եռամսյա սպասարկման համար նախատեսվել է 66,604.0 հազ. դրամ: Պայմանագրի մաս կազմող «Ծրագրի նախագծի» համաձայն, եռամսյա սպասարկման ժամանակահատվածում, հիմնադրամի կողմից պետք է կազմվեր դպրոցների այցելությունների գրաֆիկ, որի համաձայն պետք է իրականացվեին այցեր, բացի այդ հիմնադրամը պետք է վարեր ցանցի վիճակը բնութագրող, դպրոցների կողմից օգտագործած ինտերնետի ծավալը ցուցադրող և այլ ցանցային գործիքներ: Վերոնշյալ գործիքների վարման և առհասարակ ցանցի սպասարկման, ինչպես նաև իրականացված այցելությունների վերաբերյալ ԾԻԳ-ը հիմնադրամից տեղեկատվություն չի պահանջել և չի ստացել: Այսինքն, ԾԻԳ-ը պայմանագրի գլխավոր պայմանների 12-րդ և 19-րդ կետերի համաձայն հիմնադրամին վճարել է 66,604.0 հազ. դրամ միայն ներկայացված հաշվետվությունների և դուրս գրված հարկային հաշիվների հիման վրա՝ առանց ունենալու որևէ տեղեկություն կամ աշխատանքների կատարման վերաբերյալ լրացուցիչ այլ հիմնավորումներ (տեղեկատվություն ԿՏԱԿ-ից, հարցումների արդյունքներ դպրոցներից և այլն): Հատկանշական է այն, որ եռամսյա սպասարկման ժամանակահատվածում նույնպես ԿՏԱԿ-ը այդ գործընթացին որևէ մասնակցություն չի ունեցել, սակայն 2012թ.

սեպտեմբերի 18-ի եռակողմ (ՕԻԳ, հիմնադրամ և ԿՏԱԿ) հաստատված հանձնման-
ընդունման արձանագրության համաձայն, ցանցը ընդունվել է ԿՏԱԿ-ի կողմից:

4. Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

2010թ. մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը բաղադրիչի դրամարկդային ծախսը կազմել
է 943,454.9 հազ. դրամ:

Բաղադրիչի նպատակն է ավագ դպրոցների համար կահույքի, սարքավորումների, համակարգիչների և գրքերի ձեռք բերումը, տնօրենների, ուսուցիչների և գրադարանավարների ուսուցումը, վերապատրաստումը: 2012թ. կնքված պայմանագրերով մատակարարված ապրանքների գները թեև համապատասխանում են ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1356-Ն որոշման հիման վրա ստեղծված գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում շուկայական գների մասին տրված երաշխավորության մեջ ներկայացված գներին, սակայն գնահատող հանձնաժողովը շուկայական գների ուսումնասիրությունը իրականացրել է միայն գնանշումների հարցման միջոցով (գրքերի մասով հարցումներ են իրականացվել երկու, իսկ կահույքի մասով երեք կազմակերպությունների), այն դեպքում, երբ որոշմամբ նախատեսված այլ մեխանիզմների կիրառումը անհնարին չէր, ինչպես նաև այն, որ շուկայում առկա էին վերոնշյալ գործունեությամբ զբաղվող բազմաթիվ այլ կազմակերպություններ: Ապրանքների նախահաշվային գները առավելագույնս շուկայական գներին մոտեցնելու նպատակով հնարավոր էր հարցումներ իրականացնել շուկայում առկա ավելի մեծ թվով կազմակերպությունների, որի արդյունքում կհիմնավորվեր ինչպես նախահաշվային գինը, այնպես էլ կնպաստեր դրա նվազեցմանը, հետևաբար կապահովվեր նաև միջոցների օգտագործման արդյունավետությունը: Որոշման բոլոր պահանջներին համապատասխան ուսումնասիրություն չիրականացնելու արդյունքում մատակարարված գրքերի գները,

(մատակարարվել են «Բուկինիստ» և «Անտարես» ՍՊԸ-ների կողմից, որի ընդհանուր արժեքը կազմել է 148,729.8 հազ. դրամ) մասնավորապես «Անտարես» ՍՊԸ-ի կողմից՝ մատակարարված 14 անուն գրքերի գները 1.5-ից 2 անգամ բարձր են շուկայում առկա գներից: Ընդհանուր առմամբ բոլոր գրքերի գները պետք է ցածր լինեին շուկայական գներից, քանի որ յուրաքանչյուր գրքից ձեռք է բերվել ոչ թե մեկ, այլ 105 օրինակ, որոշ գրքեր նաև՝ 210 օրինակ: Կարևոր է նշել նաև այն, որ ձեռք բերված գրքերի ցանկը կազմվել է առանց ավագ դպրոցների հարցումների, որի արդյունքում չի հիմնավորվել ցանկում ընդգրկված գրքերի կարիքը:

Ավագ դպրոցները, համաձայն դեկավար ձեռնարկի..., մինչև 2011թ.. սեպտեմբեր ամիսը պետք է համալրվեին նաև էլեկտրոնային գրականությամբ (որով կհիմնավորվեր գրադարանները համակարգչային սարքավորումներով ապահովելու անհրաժեշտությունը), որը չի իրականացվել, իսկ տպագիր գրականությունն էլ մատակարարվել է նախատեսվածից մեկ տարի ուշացումով: Վերը նշված գործիքների առկայությունը դրական ազդեցություն ունի կրթության որակի բարելավման, ինչպես նաև ավագ դպրոցների կայացման գործընթացի վրա:

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է իրականացնել ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումներ, որոնք իրականացվել են երկու («Հայաստանի պետական մանկավարժական համալսարան», «Երևանի Վ. Բրյուսով անվան պետական լեզվաբանական համալսարանը») մանկավարժական ԲՈՒՀ-երում, որոնց աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվություններն ընդունվել են ԾԻԳ-ի կողմից:

2010-2011թթ. Երևան քաղաքում իրականացված երեք վերապատրաստումների վրա կատարված ծախսը կազմել է 119,730.6 հազ. դրամ, վերապատրաստվել են 969 ուսուցիչներ: Մեկ ուսուցչի վերապատրաստման միջին ծախսը կազմել է 120.0 հազ. դրամից ավելի: Միջոցներ չեն ձեռնարկվել հանրապետության տարբեր մարզերում տեղակայված մանկավարժական ԲՈՒՀ-երում վերապատրաստումներ իրականացնելու նպատակով, որը էականորեն կնվազեցնեք մեկ ուսուցչի հաշվով

կատարվող ծախսերը (մասնավորապես գիշերավարձի և սննդի համար ծախսեր չկատարելու արդյունքում):

Վերապատրաստման դասընթացների ղեկավարների, համակարգողների, դասախոսների վարձավճարների չափերի սահմանման նպատակով որևէ նորմատիվ իրավական ակտ չի մշակվել և չի ներդրվել: Նշված անձանց վարձատրության չափերը առաջարկվել են վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների կողմից: Վերապատրաստվող ուսուցիչների գիշերավարձի և օրապահիկի ծախսերի փոխհատուցումները տրվել են ՀՀ կառավարության 2005թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան, սակայն Երևան քաղաքի ուսուցիչներին երեք պայմանագրերի շրջանակներում տրվել է 10,943.7 հազ. դրամի սննդի գումար (դրանք պետք է տրվեին միայն բնակավայրից 30կմ-ից ավելի հեռավորությունից ժամանած ուսուցիչներին): Ընդ որում 10/10 և 11/10 պայմանագրերով կատարողի կողմից ներկայացված նախահաշվով նշված ծախսերը նախատեսված չեն եղել: Բացի այդ, թիվ 28/11 և 11/10 պայմանագրով «Բոնապ» ՍՊԸ-ին փոխանցվել է 450.0 և 218.0 հազ. դրամ ֆուրշետ կազմակերպելու համար, որի անհրաժեշտությունը հիմնավորված չէ:

ԾԻԳ-ի և «Այ-Ի Փարթներս» ՍՊԸ-ի միջև 27.09.2010թ. կնքված 3-1/10 պայմանագրով ՍՊԸ-ն պարտավորվել է 72,868.1 հազ. դրամով (դրամարկղային ծախսը կազմել է 64,182.7 հազ. դրամ) մշակել և ներդնել գրադարանավարության համար նախատեսված հատուկ համակարգչային ծրագրեր և նյութեր, իրականացնել ավագ դպրոցների գրադարանավարների և դասախոսական խմբի վերապատրաստում, ինչպես նաև ստեղծել և տեղադրել վերապատրաստման կայք:

Ընտրանքային կարգով Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գտնվող շուրջ 30 ավագ դպրոցներում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ կազմակերպության կողմից ստեղծված կայքը չի գործում, գրադարանավարների մեծ մասը անտեղյակ է կամ չի տիրապետում կազմակերպության կողմից մշակված

գրադարանային նյութերին և համակարգչային ծրագրին, այն դեպքում, երբ բոլոր գրադարանավարներն անցել են համապատասխան վերապատրաստում:

ԾԻԳ-ի և «Ինթերնեյշնլ Էդյուքեյշն Փարթներս Էյ-ԷՄ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով ՍՊԸ-ն պարտավորվել է 14,159.0 հազ. դրամով (դրամարկղային ծախսը կազմել է 13,168.0 հազ. դրամ) մշակել ավագ դպրոցների գրադարանավարների վերապատրաստման ծրագիր և դրա հիման վրա իրականացնել ավագ դպրոցների գրադարանավարների վերապատրաստում 2011թ. նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևան քաղաքում: Վերապատրաստման ընթացքում գիշերող վերապատրաստվողին մեկ օրվա օրապահիկի համար 2.0 հազ. դրամի փոխարեն հաշվարկվել և վճարվել է 2.5 հազ. դրամ, որի հետևանքով սննդի ծախսերը 2,352.0 հազ. դրամի փոխարեն կազմել են 2,940.0 հազ. դրամ, կամ 588.0 հազ. դրամով ավելի: Այս վերապատրաստումները նույնպես հնարավոր էր իրականացնել տարածքային սկզբունքով և հեռավար ձևով, քանի որ մարզերում գործում են ԿԱԻ մարզային կենտրոնները, ինչպես նաև ավագ դպրոցներ, որոնք հազեցված են բոլոր անհրաժեշտ միջոցներով: Այս դեպքում հնարավոր էր տնտեսել միջոցներ գիշերավարձի և օրապահիկի չվճարման արդյունքում:

5. Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը

2010թ. մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը բաղադրիչի դրամարկղային ծախսը կազմել է 135,958.9 հազ. դրամ:

Բաղադրիչի շրջանակում, համաձայն ղեկավար ձեռնարկի՝ «Ուսանողական վարկերի համակարգի ձևավորում» գործողությունով նախատեսվել է «Ուսանողական վարկերի փորձնական ծրագրի» առանձին ձեռնարկի մշակում: Ուսանողական վարկերի տրամադրման սխեմայի համաձայն ղեկավար ձեռնարկը պետք է մշակվեր ծրագրի իրականացման առաջին տարում միջազգային

խորհրդատուների աջակցությամբ՝ հիմնական օրենսդրական փաստաթղթերի մշակումից հետո: Վերը նշված «Ուսանողական վարկերի փորձնական ծրագրի» առանձին ձեռնարկ ԾԻԳ-ի կողմից չի մշակվել:

ՀՀ վարչապետի հանձնարարագրի համաձայն հանձնարարվել է ՀՀ ԿԳ նախարարին ուսանողական վարկերի տրամադրման նպատակով նախատեսված վարկային միջոցներից 1.5 մլն. ԱՄՆ դոլարը տեղափոխել այլ նպատակներով օգտագործելու համար, որը համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 15.09.2011թ.-ի ՀՀ վարչապետին ուղղված N 01/19/10240-11 գրության նախատեսվել է միջոցները վերաբաշխել ծրագրի այլ բաղադրիչների վրա:

Ելնելով նախատեսված վերաբաշխման արդյունքներից՝ բաղադրիչի վերջնական նպատակը (ուսանողական վարկերի տրամադրում) չի իրականացվելու ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով: Այն դեպքում, երբ ուսանողական վարկերի համակարգի ձևավորում գործողության շրջանակներում 2010-2011թթ. ընթացքում ԾԻԳ-ի կողմից կատարվել է 34,009.8 հազ. դրամի ծախսեր:

6. Աջակցություն ծրագրի իրականացմանը

Ծրագրի սկզբից մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ը ծրագրի աջակցության դրամարկղային ծախսը կազմել է 486,502.2 հազ. դրամ, որից 328,173.7 հազ. դրամ են կազմել աշխատավարձը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, 93,079.0 հազ. դրամ՝ գործառնական ծախսեր, 53,718.2 հազ. դրամ՝ ապրանքների ձեռք բերում, 11,531.3 հազ. դրամ վերապատրաստումներ և խորհրդատվական ծառայություններ:

2010թ. ԾԻԳ-ի կողմից ձեռք է բերվել մեկ Տոյոտա Պրադո մակնիշի ավտոմեքենա (16,280.0 հազ. դրամ) և բջջային հեռախոս (136.5 հազ. դրամ): Չորս ավտոմեքենաների պահպանման ծախսը (այդ թվում՝ վառելիք) կազմել է 6,892.0 հազ. դրամ, մեկ բջջային հառախոսակապի ծառայության վճարը՝ 1,491.2 հազ. դրամ:

2011թ. կատարվել են հետևյալ ծախսերը՝ մեկ բջջային հեռախոսի ձեռք բերում՝ 290.0 հազ. դրամ, չորս ավտոմեքենաների պահպանման ծախսեր (այդ թվում՝

վառելիք)՝ 7,592.0 հազ. դրամ, երկու բջջային հեռախոսակապի ծառայության վճար՝ 610.0 հազ. դրամ:

2012թ. ձեռք է բերվել մեկ Տոյոտա Պրադո և մեկ Տոյոտա Կոռոլլա մականիշի ավտոմեքենաներ, համապատասխանաբար՝ 17,100.0 հազ. դրամ և 9,900.0 հազ. դրամ գնով, այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 830-Ն որոշման հավելվածով պետական բյուջեի միջոցներով հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների ծառայողական ավտոմեքենայի առավելագույն գին է սահմանվել 13,000.0 հազ. դրամ, իսկ պետական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների և այդ կազմակերպությունների սպասարկման համար մեքենաների առավելագույն գինը 8,500.0 հազ. դրամ է:

Եզրակացություն

1. «Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» բաղադրիչի շրջանակներում «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից մեկ դաստիարակի 21 ժամյա վերապատրաստման ծախսը կազմել է 80.1 հազ. դրամ, այն դեպքում, երբ վերապատրաստման փորձ ունեցող «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող 30 ժամյա վերապատրաստման ծախսը մեկ անձի հաշվով 15.0 հազ. դրամ է: Նախատեսվել և կատարվել են այնպիսի ծախսեր (խորհրդատվություն, մոնիթորինգ, ուսումնական այցելություններ, տեխնիկական օժանդակություն, սննդի գումար, վառելիք և այլն), որոնք վերապատրաստման բուն գործընթացի իրականացման հետ հիմնականում առնչություն չունեն:
2. Չի պահպանվել միկրոծրագրերի ղեկավար ձեռնարկի պահանջը: Յուրաքանչյուր հաստատությունից 2-ական մանկավարժական կադրեր վերապատրաստելու փոխարեն, վերապատրաստվել են 3-ից 6-ը: 2010-2011թթ.

նախատեսվածից 121 մարդ ավել վերապատրաստելու արդյունքում ԾԻԳ-ի կողմից կատարված ծախսը կազմել է 3,727.2 հազ. դրամ:

3. Մեկ վերապատրաստվողի սննդի և սուրճի ընդմիջման համար նախատեսվել են 4.0 հազ.դրամ և 5.0 հազ.դրամ, որոնք որևէ իրավական ակտով սահմանված չեն և համադրելի չեն այլ բաղադրիչներով իրականացված վերապատրաստումների համանման ծախսերի հետ: Դրանք հիմնադրամի կողմից նախատեսվել են կամայական, որոնք ընդունվել են ԾԻԳ-ի կողմից և վճարվել հաշվետվությունների հիման վրա:
4. «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» բաղադրիչի շրջանակներում մինչև 30 կմ հեռավորությունից վերապատրաստման վայր ժամանած ուսուցիչներին 13 վերապատրաստող կազմակերպությունների նախահաշիվներով նախատեսվել և վճարվել է 121,206.0 հազ. դրամ սննդի գումար (մեկ անձի հաշվով՝ օրական 2.0 հազ.դրամ), որը ուսուցիչների վերապատրաստման ղեկավար ձեռնարկով կամ որևէ իրավական ակտով չի նախատեսվել:
5. 2011թ. մեկ ուսուցչի վերապատրաստման միջին ծախսը կազմել է 103.9 հազ. դրամ, 2012թ.՝ 48.2 հազ. դրամ, քանի որ 2012թ. չեն նախատեսվել և կատարվել սննդի, համակարգչային սարքավորումների և տեխնիկայի, առանձին դեպքերում նաև տրանսպորտային ծախսերը:
6. Վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները (այդ թվում՝ ոչ պետական) ԾԻԳ-ի կողմից հատկացված դրամաշնորհային միջոցներով ձեռք են բերել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ, սակայն պայմանագրերում չեն սահմանվել դրանց հետագա տնօրինման պայմանները, այն դեպքում, երբ հնարավոր է, որ վերոնշյալ կազմակերպությունները հետագայում չընդգրկվեն վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ցանկում:
7. Բաղադրիչով նախատեսված տնօրենների վերապատրաստումներ չեն իրականացվել: Ավելին՝ տնօրենների վերապատրաստման գործընթացը

դադարեցվել է այն դեպքում, երբ վերապատրաստումների ձեռնարկի և ուղեցույցի մշակման ու վերապատրաստող 25 դասախոսների պատրաստման նպատակով արդեն ծախսվել է 69,947.9 հազ. դրամ:

8. «Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում» բաղադրիչով նախատեսվել է բաց կրթական միջավայրի (պլատֆորմի) ստեղծում, որի իրականացման գործողությունը դադարեցվել է, այն դեպքում, երբ պլատֆորմի տեխնիկական հատկորոշիչների մշակման նախնական աշխատանքների համար միջազգային փորձագետին արդեն վճարվել է 6,878.7 հազ. դրամ:
9. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հատկացվել է 50 համակարգչային սարքավորումների փաթեթ (25,079.0 հազ. դրամի), որը ղեկավար ձեռնարկով չի նախատեսվել:
10. «Աջակցություն ավագ դպրոցների բարեփոխումներին» բաղադրիչի շրջանակներում 105 ավագ դպրոցների գրադարանները գրքերով համալրելու նպատակով «Անտարես» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 14 անուն գրքերի գները շուկայականից 1.5-2 անգամ բարձր են եղել:
11. Երևան քաղաքում, կազմակերպված վերապատրաստման ժամանակահատվածում, Երևան քաղաքի ավագ դպրոցների ուսուցիչներին (որոնք բնակվում են Երևանում) վճարվել է 10,943.7 հազ. դրամի սննդի գումար, որը որևէ իրավական ակտով սահմանված չէ:
12. «Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը» բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է ուսանողական վարկերի տրամադրման գործողությունը, որը դադարեցվել է, այն դեպքում, երբ վարկերի համակարգի ձևավորման նպատակով արդեն իսկ ծախսվել է 34,009.8 հազ. դրամ:
- Բաղադրիչների և դրանց շրջանակներում իրականացվող գնումների համար նախատեսվող միջոցները հաշվարկներով հիմնավորված չեն: Չկան

համապատասխան իրավական ակտեր, որոնց շրջանակներում և դրանց համապատասխան պետք է ձևավորվեն (նախատեսվեն, փոփոխվեն) բաղադրիչների և դրանց գործողությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

- Աշխատանքների, ծառայությունների և ապրանքների նախահաշվային գները նախատեսվում են առանց համապատասխան շուկաների պատշաճ ուսումնասիրության, ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրա իրականացման համար առկա են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնագիտացված կառույցների, ծառայություն մատուցող, աշխատանքներ կատարող և ապրանքներ արտադրող ու մատակարարող բազմաթիվ կազմակերպությունների կայքերը և այլ հնարավորություններ: Չհիմնավորված նախահաշվային գինը հանգեցնում է միջույթի մասնակիցների կողմից առաջարկվող գների բարձրացմանը:
- ԾԻԳ-ը գործում է ազատ և ունի բավականաչափ մեծ լիազորություններ, որն ինչպես իրավական դաշտի բաց լինելու, այնպես էլ գործող իրավական ակտով ամրագրված հսկողության չիրականացման արդյունք է (ՀՀ կառավարության 2010թ. թիվ 324-Ն որոշման համաձայն ՀՀ գանձապետարանը ԾԻԳ-երին մատուցում է զուտ բանկային ծառայություններ և նախնական հսկողության գործառույթներ չի իրականացնում): ԾԻԳ-ն ինքնուրույն է տնօրինում վարկային միջոցները (ինչպես նաև համամասնությամբ հատկացվող բյուջետային միջոցները), իր հայեցողությամբ կազմում է գնումների պլանը, դրանում կատարում փոփոխություններ (վերաբաշխումներ), և դրանք համաձայնեցնելով ՀԲ-ի հետ իրականացնում է գործողություններ: Արդյունքում, 2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրի համար նախատեսված վարկային և բյուջետային միջոցներից տնտեսված և չբաշխված միջոցները կազմել են 7,682.0 հազ. դոլար, կամ ամբողջ վարկային ծրագրի 24%-

ը և պարզ չէ, թե այդ միջոցները, որ բաղադրիչներին են ուղղվելու և ինչ նպատակով են օգտագործվելու:

- Վարկային միջոցներով իրականացվող տրանսպորտային միջոցների ձեռք բերման գների, դրանց պահպանման ծախսերի, կապի ծառայություններից օգտվելու ծախսերի նորմատիվներ իրավական ակտերով սահմանված չեն: Դրանք որոշվում են ՄԻԳ-ի կողմից և իրականացվում են ըստ անհրաժեշտության:
- Աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացն ընթացակարգերով կարգավորված չէ, որի արդյունքում պարզ չէ դրանք ընդունողի պարտականությունների, պարտավորությունների պատասխանատվության ու լիազորությունների շրջանակը:

Առաջարկություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

1. ՄԻԳ-ի գործունեության՝ մասնավորապես գնումների պլանով նախատեսվող գործողությունների անհրաժեշտության, դրանց իրականացման համար նախատեսվող միջոցների և կատարվող փոփոխությունների հիմնավորվածության, նախարարության կողմից դրանց ուսումնասիրության հնարավորության ապահովման նպատակով մշակել ընթացակարգ:
2. Վերապատրաստումների համար հավասար դաշտ ապահովելու և վերապատրաստողների կողմից կամայական նախատեսումները բացառելու նպատակով մշակել և հաստատել վերապատրաստողի մեկ ժամվա վճարի, ինչպես նաև վերապատրաստման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ այլ ծախսերի չափերը (ծրագրի ղեկավարի աշխատավարձ, վերապատրաստվողների ընդմիջման ծախսեր և այլն):

3. Վարկային միջոցների (ինչպես նաև համամասնությամբ հատկացվող բյուջետային միջոցների) նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ԾԻԳ-ի գործունեությունը իրավական ակտերին համապատասխան իրականացնելու նպատակով նախաձեռնել գործող իրավական ակտերում փոփոխություններ ու լրացումներ՝ մասնավորապես տրանսպորտային միջոցների ձեռք բերման առավելագույն գնի, դրանց պահպանման համար անհրաժեշտ միջոցների, կապի ծառայություններից օգտվելու չափերը սահմանող և այլ իրավական ակտերում և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկին՝

Վարկային միջոցների (ինչպես նաև համամասնությամբ տրամադրվող բյուջետային միջոցների) արդյունավետ օգտագործման նպատակով՝

- բաղադրիչների, դրանց շրջանակներում իրականացվող գնումների համար միջոցները նախատեսել հիմնավորված հաշվարկների հիման վրա,
- գնումների գործընթաց իրականացնելիս գնվող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գները շուկայական գներին առավել մոտեցնելու (նախահաշվային իրական գին ստանալու) նպատակով, ապահովել ՀՀ Կառավարության 22.09.2011թ. թիվ 1356-Ն որոշման 4-ից 6-րդ գլուխներով նախատեսված գործողությունների պատշաճ և ամբողջական կատարումը, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ իրականացնել օրենքով չարգելված այլ միջոցառումներ:
- Մրցույթի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծում (հետագայում նաև կնքվող պայմանագրերում) նախատեսել այնպիսի դրույթներ և գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն պատվիրատուին հսկողություն իրականացնելու ինչպես կատարողի

կողմից պարտավորությունների կատարման ընթացքի, այնպես էլ վերջնական արդյունքի հանձնման-ընդունման գործընթացի նկատմամբ: Մշակել աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացը կարգավորող ընթացակարգեր:

- Աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնումն իրականացնել կարիքին համպատասխան և համարժեք փոխհատուցմամբ:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел.: 52 66 02, ֆաքս/факс/ fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N----- "-----2013թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար
պրն. Տ. Սարգսյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի
2013 թվականի ապրիլի 17-ի թիվ 02/23.14/5287-13 և թիվ 02/23.14/5335-13
գրություններով տրված ՀՀ վարչապետի հանձնարարականների

Մեծարգո վարչապետ.

Ի լրումն 2013 թվականի ապրիլի 11-ի թիվ 01/11.1/3769-13 գրության ներկայացնում եմ
ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/7, 5/6 և 2013
թվականի մարտի 29-ի թիվ 7/1 որոշումներով հաստատված հաշվետվությունների
վերաբերյալ բացատրությունները և արձանագրված խախտումները վերացնելու
վերաբերյալ տեղեկատվությունը (կցվում են):

Հարգանքով՝

Ա. Աշոտյան
(պաշտոնակատար)

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/6 և 2013 թվականի մարտի 29-ի թիվ 7/1 որոշումներով հաստատված հաշվետվություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերահսկողության արդյունքների վերաբերյալ

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1.	459 դպրոց մեկուկես ամիս չեն սպասարկվել, որի արդյունքում այդ նպատակով նախահաշվով նախատեսված միջոցներից 31,915.1 հազ. դրամը ենթակա է փոխանցման պետական բյուջե:	չկան	Որոշման մեջ նշված 31,915.1 հազ. դրամը 2013թ. փետրվարի 19-ին վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:
2.	ՀԴԻՑ-ի ամենամյա սպասարկման համար անհրաժեշտ միջոցները նախատեսել՝ ելնելով օպտիկամալուխային կապի, ինտերնետային ծառայության սակագների, աշխատակիցների թվաքանակի, միջին աշխատավարձի, գործուղման և այլ անհրաժեշտ ծախսերի հիմնավորված հաշվարկների հիման վրա:	չկան	Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը անվանափոխվել է Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ): 2014 թվականի պետական բյուջեի պլանավորման ժամանակ ՀԿՑ սպասարկման համար անհրաժեշտ միջոցները նախատեսելու համար կներկայացվի սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի տարբերակ՝ որտեղ հնարավորինս կարտացոլվեն օպտիկամանրաթելային կապի, ինտերնետային ծառայությունների

			սակագները, անհրաժեշտ աշխատակիցների թվաքանակը, միջին աշխատավարձը, գործուղման և այլ անհրաժեշտ ծախսերը:
3.	ՀԴԻՑ-ի սպասարկման գնման իրականացման հրավերի պայմանագրի նախագծում (հետագայում նաև պայմանագրերում) նախատեսել դրույթներ՝ համաձայն որի ՀԴԻՑ-ի սպասարկման ամեն ամսվա ծառայության մատուցման գինը պետք է որոշվի՝ ելնելով տվյալ ամսում սպասարկված դպրոցների քանակիցմ ինչպես նաև դրույթ այն մասին, որ ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպությունը պետք է ծառայությունը մատուցի ինքնուրույն՝ բացառելով ծառայության մատուցման որոշ կամ հիմնական մասի իրականացման փոխանցումն այլ անձի (անձանց):	չկան	ՀԿՑ-ի սպասարկման համար գնման իրականացման պայմանագրի նախագծում կնախատեսվի դրույթ՝ յուրաքանչյուր ամսվա ծառայության մատուցման գինը տվյալ ամսում սպասարկված դպրոցների քանակով որոշելու համար: ՀԿՑ սպասարկման ծառայությունը միայն մեկ կազմակերպությունով իրականացնելու մասին դրույթն այնքան էլ իրատեսական չէ, քանի որ նման պայմանը խտրական է և կնեղացնի մրցույթի մասնակիցների շրջանակը:
4.	ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպության կողմից ամենամսյա ներկայացված հաշվետվություններով տվյալների համապատասխանությունը ճշտելու նպատակով կենտրոնական հանգույցի միջոցով պարզել և արձանագրել, թե որ դպրոցները տվյալ ամսում միացված չեն եղել ՀԴԻՑ-ին:	չկան	ՀԿՑ սպասարկող կազմակերպության կողմից ներկայացվող հաշվետվությունների տվյալների համապատասխանությունը 2013թ. հունվարից ճշտվում է կենտրոնական հանգույցի տվյալներով: Սպասարկող կազմակերպությունը բոլոր ուսումնական հաստատություններին, որպես պահուստային կապ, իր նախաձեռնությամբ հատկացրել է 3G մոդեմներ և

			հեռախոսահամարներ, որոնք հնարավորություն են տալիս անվճար զանգեր կատարել բոլոր դպրոցներին և տեխնիկական աշխատակիցներին: Նորից սպասարկող կազմակերպության նախաձեռնությամբ ընթացքի մեջ է երևանի դպրոցները օպտիկամանրաթելային կապուղով կենտրոնական հանգույցին միացնելու աշխատանքը, որը ԿՏԱԿ-ին տրամադրված ժամանակացույցի համապատասխան կավարտվի 2013թ. աշնանը:
5.	Մշակել համապատասխան գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն պարբերաբար պարզելու ՀԴԻՑ-ից չօգտվող դպրոցների ցանկը և դրա պատճառները, ինչպես նաև կապահովեն վերահսկողություն իրականացնելու սպասարկող կազմակերպության պարտավորությունների կատարման նկատմամբ:	չկան	2013թ. հուլարից, 2013թ. ՀԿՑ սպասարկման համար հայտարարված բաց ընթացակարգի գնման հայտին համապատասխան, կենտրոնական հանգույցում տեղակայվել է ՀԿՑ կառավարման համար անհրաժեշտ գործիքների նոր համակարգը:
6.	ՀԴԻՑ-ի սպասարկման ու ցանցային սարքավորումների ձեռք բերման բյուջետային ֆինանսավորման հայտով միջոցները նախատեսել առանձնացված:	չկան	2014թ. ՀՀ պետական բյուջեի նախապատրաստման ընթացքում կառանձնացվեն ՀԿՑ սպասարկման և ցանցային սարքավորումների ձեռքբերման համար անհրաժեշտ միջոցները: 2013թ. համար ՀԿՑ սպասարկման և ցանցային սարքավորումների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ԿՏԱԿ-ին

			հատկացվում են առանձին պայմանագրերով:
7.	ՀԴԻՑ-ի ցանցային սարքավորումների նորացման համար միջոցներ նախատեսել՝ ելնելով սարքավորումների փոխարինման կարիքի, դրանց պիտանելիության ժամկետի և նախորդ տարիներին խափանված սարքավորումների վիճակագրության ուսումնասիրությունից:	չկան	2014թ. ՀՀ պետական բյուջեի նախապատրաստման ընթացքում հաշվի է կառնվի նաև նախորդ տարիներին խափանված սարքավորումների վիճակագրությունը: 2013թ. համար արդեն իսկ հաշվի է առնվել սարքավորումների խափանման վիճակագրությունը և միջոցները նախատեսվել են ելնելով նախորդ տարիներին խափանված սարքավորումների քանակից և տեսակից ելնելով:
8.	Պարբերաբար իրականացնել խափանված սարքավորումների մասնագիտական ուսումնասիրություն՝ պարզելու վերանորոգման արդյունքում դրանց հետագա օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև վերանորոգման ոչ ենթակա սարքավորումների դուրս գրման անհրաժեշտությունը:	չկան	Ընթացքի մեջ են խափանված սարքավորումների մասնագիտական ուսումնասիրության աշխատանքները, որից հետո այն սարքերի համար, որոնք ենթակա չեն վերանորոգման, ընթացք կտրվի դուրս գրման գործընթացին:
9.	ՀԴԻՑ-ին միացված հաստատություններում սարքավորումների փոխարինման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ • իրականացնել սարքավորման փոխարինման կարիք ունեցող հաստատությունների հաշվառում, • բացի համապատասխան գույքային համարները նշելուց, սպասարկող	չկան	2013թ. հունվարից ընթանում է սարքավորման փոխարինման կարիք ունեցող ուսումնական հաստատությունների ամենօրյա հաշվառում, սարքավորումները փոխարինման հանձնելուց նշվում են գործարանային համարները, իսկ փոխարինման համար առավելագույն ժամկետ նշվում է մեկ ամիսը:

	կազմակերպությանը տրվող սարքավորումների փոխարինման հանձնարարագրերում, ինչպես նաև փոխարինումն հավաստող համապատասխան եռակողմ հանձնման-ընդունման ակտերում նշել նաև սարքավորման գործարանային համարը, • սարքավորումների փոխարինման վերաբերյալ համապատասխան հանձնարարագրերում նշել փոխարինման ժամկետները:		
--	---	--	--

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/6 և 2013 թվականի մարտի 29-ի թիվ 7/1 որոշումներով հաստատված հաշվետվություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, գույքի և սարքավորումների ձեռքբերում» ծրագրի հիմնանորոգման մասով իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ

№	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1.	«Արտաշատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Շինարար համակարգիչ» ՍՊԸ <i>Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 605.00 հազ.դրամ, անորակ աշխ. 116.20 հա.դրամ</i>		ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված ծավալային հավելագրման և անորակ աշխատանքների ընդհանուր 721,2 հազ.դրամ խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ 759.311 հազ.դրամի(կցվում է)
2	«Եղեգնաձորի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Հարսնաձոր» ՍՊԸ	Կապալառու կազմապերպության կողմից ներկայացվել են առարկություններ արձանագրված հավելագրումների վերաբերյալ	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է

	Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 2871.50 հազ.դրամ, անորակ աշխ. 1742.00 հազ.դրամ	(կցվում է)	արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված անորակ աշխատանքները կվերականգնվեն եղանակային բարենպաստ պայմանների ժամանակ
3	«Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Ագարակ» ԲԲԸ Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 154.76 հազ.դրամ, անորակ աշխ. 419.76 հազ.դրամ		ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված ծավալային հավելագրման և անորակ աշխատանքների խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ (ծավալային հավելագրման դիմաց կատարված լրացուցիչ աշխատանքների ակտը կցվում է)
4	«Թալինի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Տավրիդա» ՍՊԸ Խախտման չափը՝ Անորակ աշխ. 2 716.68 հազ.դրամ		ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված անորակ աշխատանքների խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/7 և 2013 թվականի մարտի 29-ի թիվ 7/1 որոշումներով հաստատված հաշվետվություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից վարկային, դրամաշնորհային և պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
Ընթացիկ հաշվետվության 1-ին և եզրակացության 1-ին կետերի վերաբերյալ.		
<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամի կողմից մեկ դաստիարակի 21 ժամյա վերապատրաստման ծախսը կազմել է 80.1 հազ.դրամ, այն դեպքում, երբ վերապատրաստման փորձ ունեցող <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվող 30 ժամյա վերապատրաստման ծախսը մեկ անձի հաշվով 15.0 հազ.դրամ է: Նախատեսվել և կատարվել են այնպիսի ծախսեր /խորհրդատվություն, մոնիտորիգ, ուսումնական այցելություններ, տեխնիկական օժանդակություն, սննդի	<<Քայլ առ քայլ>> ԲՀ-ն Հայաստանում միակ կազմակերպությունն է, որն ունի նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստման առաջադեմ փորձ: Այն աշխարհի տարբեր երկրներում փորձարկված և երկարամյա զարգացում ունեցող նախադպրոցական ուսուցման ծրագիր է: Երեխաների զարգացմանն ու կրթությանն ուղղված այդ կազմակերպության	<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամի հետ 2013 թվականին կնքվելիք պայմանագրի նախագիծը պատրաստելիս հաշվի են առնվել 2012 թվականին ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները:

գումար, վառելիք և այլն/, որոնք վերապատրաստման բուն գործընթացի իրականացման հետ հիմնականում առնչություն չունեն:	կողմից մշակված և լայնորեն կիրառվող ուսումնական նյութերը ունեն միջազգային ճանաչում: <<Քայլ առ քայլ>> ԲՀ-ի կողմից իրականացված պայմանագիրը ներառում է հետևյալ գործողությունների շրջանակը՝ վերապատրաստման իրականացման նախապատրաստական աշխատանքներ, վերապատրաստումների իրականացում, մասնագիտական օժանդակություն և տեխնիկական աջակցություն վերապատրաստված դաստիարակներին, դաստիարակների աշխատանքների շարունակական մշտադիտարկում, վերապատրաստված դաստիարակների ուսումնական այցելություն <<Քայլ առ քայլ>> - ի մոդելային մանկապարտեզներ: Ուստի, վերապատրաստման բուն գործընթացի հետ կապ չունեցող ծախսերը վերաբերում են վերապատրաստումներից տարբերվող գործողությունների իրականացմանը: <<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամը ոչ պետական ոլորտի կազմակերպություն է և պայմանագրերի իրականացման համար հրավիրում է	
--	---	--

	մասնագետներ, իսկ <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ն վերապատրաստումներն իրականացնում է իր տարեկան պլանավորված աշխատանքների շրջանակներում և վարձատրում իր հիմնական աշխատակազմին: Նախադպրոցական դաստիարակների վերապատրաստման կազմակերպման Պայմանագրի առաջադրանքի շրջանակը, բացի բուն վերապատրաստման կազմակերպումից, ներառում է նաև օժանդակության ցուցաբերում վերապատրաստված դաստիարակներին՝ -մասնագիտական օժանդակություն և տեխնիկական աջակցություն վերապատրաստված դաստիարակներին, -դաստիարակների աշխատանքների շարունակական մշտադիտարկում, -վերապատրաստված դաստիարակների ուսումնական այցելություն <<Քայլ առ քայլ>> ԲՀ-ի կողմից ընտրված մոդելային մանկապարտեզներ: Եզրակացության 1-ին կետում թվարկված ծախսերը, որոնք հիմնականում առնչություն չունեն	
--	--	--

	բուն վերապատրաստման իրականացման հետ, վերաբերվում են վերոհիշյալ գործողությունների կատարմանը:	
Ընթացիկ հաշվեքվության 1-ին և եզրակացության 2-րդ կետերի վերաբերյալ.		
Չի պահպանվել միկրոծրագրերի ղեկավար ձեռնարկի պահանջը: Յուրաքանչյուր հաստատությունից 2-ական մանկավարժական կադրեր վերապատրաստելու փոխարեն վերապատրաստվել են 3-ից 6-ը: 2010-2011թվականներին նախատեսվածից 121 մարդ ավել վերապատրաստելու արդյունքում ԾԻԳ-ի կողմից կատարված ծախսը կազմել է 3,727.2 հազ.դրամ:	Ղեկավար Ձեռնարկի <<յուրաքանչյուր հաստատությունից 2-ական մանկավարժական կադրեր վերապատրաստելու>> պահանջի վերաբերյալ պարզաբանում ենք՝ 2 մանկավարժ նախատեսված է հաստատությունում ձևավորված 1 խմբի համար: Այն դեպքում, երբ նախակրթարանում բացվել է 1-ից ավելի խումբ, անհրաժեշտություն է առաջացել վերապատրաստել նախատեսվածից ավել դաստիարակներ նոր խմբերի համար: Վերապատրաստումներին մասնակցած մանկավարժական կադրերի ընտրությունը կատարում են ուսումնական հաստատությունների տնօրենները՝ ըստ իրենց իրավասության և համայնքում կադրային առկա հնարավորությունների: Հայտնում ենք նաև, որ 2010 և 2011 թվականներին թվով ավել	Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները հաշվի են առնվել ղեկավար ձեռնարկի վերանայման ժամանակ:

	դաստիարակների վերապատրաստումը չի հանգեցրել վարկային միջոցների ավել ծախսի: Ամբողջ ծրագրով ծախսված և հետագա տարիների նախատեսված ընդհանուր գումարը չի գերազանցում ծրագրով նախատեսվածը:	
Ընթացիկ հաշվետվության 1-ին և եզրակացության 2-րդ կետերի վերաբերյալ.		
Մեկ վերապատրաստվողի սննդի և սուրճի ընդմիջման համար նախատեսվել են 4.0 հազ. դրամ և 5.0 հազ. դրամ, որոնք որևէ իրավական ակտով սահմանված չեն վերապատրաստումների համանման ծախսերի հետ: Դրանք հիմնադրամի կողմից նախատեսվել են կամայական, որոնք ընդունվել են ԾԻԳ-ի կողմից և վճարվել հաշվետվությունների հիման վրա:	<<Քայլ առ քայլ>> ԲՀ-ի հետ կնքվող պայմանագիրը կնքվել է մեկ աղբյուրից գնման ընթացակարգով, որը ամրագրված է <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի <<Ծրագրի գնահատման փաստաթղթում>>: Պայմանագրի նախահաշիվը, որում նախատեսվել են բոլոր ծախսերը ըստ ընթացակարգի բանակցվել է մինչև պայմանագրի կնքումը:	<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամի հետ 2013 թվականին կնքվելիք պայմանագրի նախագիծը պատրաստելիս հաշվի են առնվել 2012 թվականին Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները:
Ընթացիկ հաշվետվության 2-րդ և եզրակացության 4-րդ կետերի վերաբերյալ.		
Բաղադրիչի շրջանակներում մինչև 30 կմ հեռավորությունից վերապատրաստման վայր ժամանած ուսուցիչներին 13 վերապատրաստող կազմակերպությունների նախահաշիվներով նախատեսվել և վճարվել է 121,206.0 հազ. դրամ սննդի գումար (մեկ անձի հաշվով՝ օրական	2011 թվականին ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների կազմակերպման համար նախատեսված ծախսերը կատարվել են համաձայն դրամաշնորհների տրամադրման	<< Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները հաշվի են առնվել 2013 թվականին իրականացվող վերապատրաստումների գործընթացի կազմակերպման ընթացքում:

	2.0 հազ. դրամ), որը ուսուցիչների վերապատրաստման ղեկավար ձեռնարկով կամ որևէ իրավական ակտով չի նախատեսվել:	ուղեցույցով ներկայացված ծախսային հոդվածների: Մասնավորապես, ինչ վերաբերում է վերապատրաստող ուսուցիչներին սննդի փոխհատուցմանը, հարկ ենք համարում նշել, որ օրական 8-9 ժամ տևողությամբ ուսուցման գործընթացում դա անհրաժեշտ և ուսուցման արդյունավետությունը ապահովող պայման է՝ անկախ ուսուցչի բնակության վայրի և վերապատրաստման վայրի միջև ընկած հեռավորությունից:	
Ընթացիկ հաշվետվության 2-րդ և եզրակացության 5-րդ կետերի վերաբերյալ.			
	2011թ. մեկ ուսուցչի վերապատրաստման միջին ծախսը կազմել է 103.9 հազ. դրամ, 2012թ.՝ 48.2 հազ. դրամ, քանի որ 2012թ. չեն նախատեսվել և կատարվել սննդի, համակարգչային սարքավորումների և տեխնիկայի, առանձին դեպքերում նաև տրանսպորտային ծախսերը:	2012 թվականին՝ քանի որ, վերապատրաստման նպատակով բյուջետային միջոցներ չեն հատկացվել, և վտանգվել է ուսուցիչների մեկ հինգերորդի պարտադիր ատեստավորման օրենսդրական պահանջը, որոշում է կայացվել վերապատրաստումներն իրականացնել առավել խնայողությամբ:	2013 թվականին ուսուցիչների վերապատրաստման գործողության նախահաշվային արժեքը հաշվարկելիս հաշվի է առնվել 2012 թվականին ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները:
Ընթացիկ հաշվետվության 2-րդ և եզրակացության 6-րդ կետերի վերաբերյալ.			

Վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները (այդ թվում՝ ոչ պետական) ԾԻԳ-ի կողմից հատկացված դրամաշնորհային միջոցներով ձեռք են բերել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ, սակայն պայմանագրերում չեն սահմանվել դրանց հետագա տնօրինման պայմանները, այն դեպքում, երբ հնարավոր է, որ վերոնշյալ կազմակերպությունները հետագայում չընդգրկվեն վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ցանկում:	Ծրագրի Ղեկավար ձեռնարկում և ՀԲ-ի կողմից ներկայացված Գնահատման փաստաթղթում որպես ենթաբաղադրիչի հիմնական խնդիր նշված է. <<Ստեղծել պայմաններ ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման համար: Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման դասընթացներ.....: Այդ գործընթացում ներգրավել համապատասխան ներուժ ունեցող պետական և ոչ պետական կրթական կազմակերպություններ>>: Հավելենք նաև, որ համաձայն նշված Ձեռնարկի՝ <<վերապատրաստումների ծառայությունների մրցակցային նոր շուկայական դաշտ ստեղծելը>> ծրագրի նպատակներից է, ուստի կարևորվել է ուսուցիչ վերապատրաստող կազմակերպությունների (այսուհետ՝ ՈՒՎԿ) կարողությունների հզորացումը: Ուստի, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման գործընթացը ներառում է ոչ	2012 թվականին, ինչպես նաև 2011 թվականին ատեստավորման ենթակա ուսուցիչ են վերապատրաստել 13 ՈՒՎԿ-ներ: Նկատի ունենալով այն փաստը, որ 2011 թվականին ՈՒՎԿ-ները արդեն ձեռք են բերել վերապատրաստումների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ, ինչի արդյունքում բավականին հարստացել է նրանց ուսումնանյութական բազան, նոր գույք ձեռք բերելու համար 2012 թվականին ՈՒՎԿ-ներին գումար չի տրամադրվել:
---	--	---

	միայն վերապատրաստման ծախսերը, այլ նաև, ըստ Ղեկավար Ձեռնարկի՝ ՈՒՎԿ-ների կարողությունների հզորացման ծախսերը՝ ներառյալ գույքի ձեռքբերումը:	
<i>Ընթացիկ հաշվետվության 2-րդ և եզրակացության 7-րդ կետերի վերաբերյալ.</i>		
Բաղադրիչով նախատեսված տնօրենների վերապատրաստումներ չեն իրականացվել: Ավելին՝ տնօրենների վերապատրաստման գործընթացը դադարեցվել է այն դեպքում, երբ վերապատրաստումների ձեռնարկի և ուղեցույցի մշակման ու վերապատրաստող 25 դասախոսների պատրաստման նպատակով արդեն ծախսվել է 69,947.9 հազ. դրամ:	Ծրագրով նախատեսված տնօրենների վերապատրաստումը պետք է ուղղված լիներ առաջնորդության և կառավարման հմտությունների զարգացմանը: Վերապատրաստումների գործընթացի նախապատրաստումը սկսվել է 2010 թվականից, մասնավորապես մշակվել են <<Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկը>>, և դասախոսի մեթոդական ձեռնարկը: Վերապատրաստվել են 25 դասախոսներ:	2012 թվականին տնօրենների վերապատրաստման համար նախատեսված գումարը վերաբաշխվել է 2013 և 2014 թվականների համար նախատեսված գործողությունների իրականացման համար: Առաջիկայում նախատեսվում է հրատարակել և բոլոր դպրոցներին տրամադրել ծրագրի շրջանակներում մշակված <<Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկը>> :
<i>Ընթացիկ հաշվետվության 3-րդ և եզրակացության 8-րդ կետերի վերաբերյալ.</i>		
«Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում» բաղադրիչով նախատեսվել է բաց կրթական միջավայրի (պլատֆորմի)	Ծրագրով նախատեսված բաց կրթական միջավայրի /պլատֆորմի/ ստեղծման գործընթացի շրջանակներում կատարվել է պլատֆորմի	Տվյալ գործողության համար նախատեսված գումարները վերաբաշխվել են նախատեսված այլ գործողությունների կատարման նպատակով: Կատարվել են

ստեղծում, որի իրականացման գործողությունը դադարեցվել է, այն դեպքում, երբ պլատֆորմի տեխնիկական հստկորոշիչների մշակման նախնական աշխատանքների համար միջազգային փորձագետին արդեն վճարվել է 6,878.7 հազ. դրամ:	տեխնիկական հատկորոշիչների և մրցութային փաստաթղթերի մշակում:	համապատասխան փոփոխություններ ծրագրի գնումների պլանում՝ համաձայնեցնելով Համաշխարհային բանկի հետ և հաստատելով Ծրագրի կառավարման խորհրդի կողմից: Բոլոր գործողությունների իրականացումը սկսվել է տարվա գնումների պլանի վերաբերյալ ՀՀ կառավարության համաձայնությունը ստանալուց հետո:
Ընթացիկ հաշվետվության 3-րդ և եզրակացության 9-րդ կետերի վերաբերյալ.		
ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հատկացվել է 50 համակարգչային սարքավորումների փաթեթ (25,079.0 հազ. դրամի), որը Ղեկավար ձեռնարկով չի նախատեսվել:	ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հատկացված 50 համակարգչային փաթեթների տրամադրումը կատարվել է մրցութային պայմաններով նախատեսված և փոփոխության թույլատրելի 15%-ի շրջանակներում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան գրության հիման վրա:	Վերոհիշյալ համակարգչային փաթեթներից տրամադրվել են ՀՀ ԿԳՆ ենթակայության հատուկ դպրոցներին, որոնք պայմանագի բաշխման ցանկում ընդգրկված չեն եղել:
Ընթացիկ հաշվետվության 4-րդ և եզրակացության 10-րդ կետերի վերաբերյալ.		
105 ավագ դպրոցների գրադարանները գրքերով համալրելու նպատակով <<Անտարես>> ՍՊԸ-ի կողմից մատակարարված 14 անուն գրքերի գները շուկայականից 1.5-2 անգամ բարձր են եղել:	105 դպրոցների գրադարանների համալրումը գրականությամբ իրականացվել է Համաշխարհային բանկի գնումների <<Ազգային մրցակցային գնում>> ընթացակարգով, որն իրականացվել է մրցութի հրապարակային	Ստուգման ընթացքում բարձր գների վերաբերյալ բարձրացված հարցադրմանը ներկայացվել է <<Անտարես>> ՍՊԸ-ի կողմից տրված բացատրություն-պարզաբանումը:

	հայտարարմամբ: Մրցույթի հայտարարումից առաջ, գնահատման հանձնաժողովի կողմից իրականացվել է շուկայի ուսումնասիրում՝ համաձայն ՀՀ կառավարության 22.09.2011թ. թիվ 1356-Ն որոշմամբ հաստատված կարգի:	
Ընթացիկ հաշվետվության 4-րդ և եզրակացության 11-րդ կետերի վերաբերյալ.		
Երևան քաղաքի ավագ դպրոցների ուսուցիչներին /որոնք բնակվում են Երևանում/ վճարվել է 10,943.7 հազ.դրամի սննդի գումար, որը որևէ իրավական ակտով սահմանված չէ:	Վերապատրաստման համար նախատեսվող պայմանագրերը կնքվել է մեկ աղբյուրից գնման ընթացակարգով, որը ամրագրված է ՀՀ Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի <<Ծրագրի գնահատման փաստաթղթում>>: Պայմանագրի նախահաշիվը, որում նախատեսվել են բոլոր ծախսերը ըստ ընթացակարգի ներկայացվել է վերապատրաստող կազմակերպության կողմից տրված առաջարկում՝ մինչև պայմանագրի կնքումը:	ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները հաշվի են առնվել 2013 թվականին նախատեսված վերապատրաստումների գործընթացի կազմակերպման ընթացքում:
Ընթացիկ հաշվետվության 5-րդ և եզրակացության 12-րդ կետերի վերաբերյալ.		
«Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը» բաղադրիչի	Ծրագրով նախատեսված ուսանողական վարկերի տրամադրման գործառույթը չի	ՀՀ Կրթության որակ և համապատասխանություն>> երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում

շրջանակներում նախատեսվել է ուսանողական վարկերի տրամադրման գործողությունը, որը դադարեցվել է, այն դեպքում, երբ վարկերի համակարգի ձևավորման նպատակով արդեն իսկ ծախսվել է 34,009.8 հազ. դրամ:	իրականացվել:	<<Բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգ>>-ի ներդրման նպատակով նախատեսված ուսանողական վարկերի տրամադրման համար հատկացված 1.5 մլն. ԱՄՆ դոլար գումարը վերաբաշխվել է երեք այլ ուղղություններով: Մասնավորապես՝ 1 մլն. ԱՄՆ դոլարը վերաբաշխվել է Նորարարությունների մրցակցային համակարգի միջոցով բուհերին դրամաշնորհների տրամադրման նպատակով: Վարկային ծրագրի ֆինանսական համաձայնագրի լրացումը կնքված է, և այն վավերացվել է ՀՀ նախագահի կողմից՝ 2013 թվականի մարտի 21-ին թիվ ՆՀ-42-Ն հրամանագրով:
<i>Ընթացիկ հաշվետվության 6-րդ կետի, <<Եզրակացություն>> և <<Առաջարկություններ>> բաժինների վերաբերյալ</i>		
<u><<Եզրակացություն>> բաժնից</u> Բաղադրիչների և դրանց շրջանակներում իրականացվող գնումների համար նախատեսվող միջոցները հաշվարկներով հիմնավորված չեն: Չկան համապատասխան իրավական ակտեր, որոնց շրջանակներում և դրանց համապատասխան պետք է ձևավորվեն / նախատեսվեն, փոփոխվեն/ բաղադրիչների և դրանց գործողությունների համար անհրաժեշտ ֆինանսական	Բաղադրիչների և դրանց շրջանակներում նախատեսվող գնումների իրականացման համար անհրաժեշտ միջոցները՝ նախահաշվարկային արժեքները, ձևավորվում են գնվող ապրանքների կամ ծառայությունների բնույթից և քանակներից ելնելով՝ հաշվի առնելով իրականացման ժամանակահատվածում առկա շուկայական գները: Գնումների իրականացման	Վարկային միջոցների (ինչպես նաև համամասնությամբ տրամադրվող բյուջետային միջոցների) արդյունավետ օգտագործման նպատակով <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի տնօրենի 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 9-Լ հրամանով հանձնարարվել է. ԿԾԿ ԾԻԳ-ի ֆինանսական ղեկավարին՝ համապատասխան

միջոցները: Աշխատանքների, ծառայությունների և ապրանքների նախահաշվային գները նախատեսվում են առանց համապատասխան շուկաների պատշաճ ուսումնասիրության, ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:	գործընթացում գնվող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների նախահաշվարկային արժեքները ձևավորելու նպատակով ԾԻԳ-ի կողմից իրականացվում է համապատասխան շուկայի ուսումնասիրության, իսկ սկսած 2011 թվականի սեպտեմբերից ապահովվում է ՀՀ կառավարության 22.09.2011 թվականի թիվ 1356-Ն որոշման կատարումը:	բաղադրիչների ղեկավարների և գնումների մասնագետների հետ կազմել 2013 թվականի գնումների պլանում ներառված գործողությունների հիմնավորված հաշվարկներ:
<u><<Առաջարկություն>> բաժնից</u> Վարկային միջոցների /ինչպես նաև համամասնությամբ տրամադրվող բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով՝ - բաղադրիչների, դրանց շրջանակներում իրականացվող գնումների համար միջոցները նախատեսել հիմնավորված հաշվարկների հիման վրա - գնումների գործընթաց իրականացնելիս գնվող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գները շուկայական գներին առավել մոտեցնելու նպատակով, ապահովել ՀՀ կառավարության 22.09.2011 թվականի թիվ 1356-Ն որոշման 4-ից 6-րդ գլուխներով նախատեսված գործողությունների պատշաճ և ամբողջական կատարումը, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ		• ԿԾԿ ԾԻԳ-ի գնումների մասնագետին՝ ա/ գնումների գործընթացում ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1356-Ն որոշման 4-ից 6-րդ գլուխներով նախատեսված գործողությունների պատշաճ և ամբողջական կատարումը; բ/աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնումն իրականացնել կարիքին համապատասխան և համարժեք փոխհատուցմամբ:

	իրականացնել օրենքով չարգելված այլ միջոցառումներ: - Աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնումն իրականացնել կարիքին համապատասխան և համարժեք փոխհատուցմամբ:		
	<u><<Եզրակացություն>> բաժնից</u> ԾԻԳ-ը գործում է ազատ և ունի բավականաչափ մեծ լիազորություններ, որն ինչպես իրավական դաշտի բաց լինելու, այնպես էլ գործող իրավական ակտով ամրագրված հսկողության չիրականացման արդյունք է: ԾԻԳ-ն ինքնուրույն է տնօրինում վարկային միջոցները, իր հայեցողությամբ կազմում է գնումների պլանը, դրանում կատարում փոփոխություններ և դարնք համաձայնեցնելով ՀԲ-ի հետ իրականացնում է գործողություններ: Վարկային միջոցներով իրականացվող տրանսպորտային միջոցների ձեռք բերման գների, դրանց պահպանման ծախսերի, կապի ծառայություններից օգտվելու նորմատիվներ իրավական ակտերով սահմանված չեն: Դրանք որոշվում են ԾԻԳ-ի կողմից և իրականացվում են ըստ անհրաժեշտության:	ԾԻԳ-ը յուրաքանչյուր տարվա համար Ծրագրի իրականացման բյուջեն և ԾԻԳ-ի պահպանման ծախսերի նախահաշիվը ներկայացնում է Ծրագրի կառավարման խորհրդի հաստատմանը նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Բացի այդ ԾԻԳ-ի պահպանման ծախսերի նախահաշիվը կազմվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 23.09.2004 թվականի 1536-Ն որոշմամբ հաստատված նորմերը և հաստատվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:	

<u><<Եզրակացություն>> բաժնից</u> Աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացն ընթացակարգերով կարգավորված չէ, որի արդյունքում պարզ չէ դրանք ընդունողի պարտականությունների, պարտավորությունների պատասխանատվության ու լիազորությունների շրջանակը: <u><<Առաջարկություն>> բաժնից</u> Մրցույթի հրավերի մաս կազմող պայանագրի նախագծում նախատեսել այնպիսի դրույթների և գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռնեն պատվիրատուին հսկողություն իրականացնելու ինչպես կատարողի կողմից պարտավորությունների կատարման ընթացքի, այնպես էլ վերջնական արդյունքի հաճնման-ընդունման գործընթացի նկատմամբ: Մշակել աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացը կարգավորող ընթացակարգեր:	ԾԻԳ-ի աշխատակիցների պարտականությունների, պարտավորությունների պատասխանատվության ու լիազորությունների շրջանակը որոշվում է նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերում սահմանված պարտականություններով: Բացի այդ ծառայությունների մատուցման կամ ապրանքների ձեռք բերման համար կնքվող պայմանագրերում սահմանվում է պայմանագրի համակարգող, որի պարտականությունները և լիազորությունների շրջանակը սահմանվում է տվյալ պայմանագրով: ՀԲ-ի կողմից հաստատված պայմանագրերի ձևաչափում առկա է աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացը կարգավորող կետեր կամ բաժիններ, որոնց համապատասխան իրականացվում է ծրագրի շրջանակներում ձեռք բերվող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնում-ընդունումը:	Վարկային միջոցների (ինչպես նաև համամասնությամբ տրամադրվող բյուջետային միջոցների) արդյունավետ օգտագործման նպատակով <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի տնօրենի 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 9-Լ հրամանով հանձնարարվել է. - ԿԾԿ ԾԻԳ-ի իրավաբանին՝ մրցույթային հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծում /հետագայում նաև կնքվող պայմանագրերում/ նախատեսել այնպիսի դրույթներ և գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռնեն հսկողություն իրականացնելու՝ ինչպես կատարողի կողմից պարտավորությունների կատարման ընթացքի, այնպես էլ վերջնական արդյունքի ընդունման գործընթացի նկատմամբ: - ԿԾԿ ԾԻԳ-ի ֆինանսական ղեկավարին, իրավաբանին, գործերի կառավարչին, ծրագրերի ղեկավարին, գնումների մասնագետին՝ մշակել աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հանձնման-ընդունման գործընթացը
--	---	--

			կարգավորող ընթացակարգեր: <i>Ընթացակարգը մշակման ընթացքում է, կազմվել է ընթացակարգի նախագիծը, կազմակերպվել են քննարկումներ, վերջնական տարբերակի մշակման նպատակով:</i>
--	--	--	--

Ծանոթություն՝ նախարարությանը ուղղված իրավական ակտերի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկները կքննարկվեն լրացուցիչ